

ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԳՐՈՒԹԻՒՆ

Արհիւս ցամառ կորներուն երարու հետ
ունեցած համեմատութիւնը .

ԱՅՐԶԻ տարիներու եղած երկրա-
բանական զննութիւններէն իմացուե-
ցաւ՝ որ երկրիս երեսը հազարաւոր
տարիներէ առաջ հրոյ և ջրոյ ազդե-
ցութիւններէն մեծամեծ փոփոխու-
թիւններ կրեր է : Բնախօսք այս եր-
կրաբանական երևութից մեծ մասը
և հրաբխից բորբոքմանէ ու ծովային
կամ գետային ջրոց ողողմանէ առաջ
եկած նիւթոց սկիզբը դիցաբանութե-
նէ փոխ առած անուններով կը բացա-
տրեն, և կրակէ առաջ եկած երևոյթ-
ներուն կ'ըսեն՝ Պրոպոնականութիւն, ջրոց
ողողմանէ առաջ եկածներուն՝ Պոսիթո-
նականութիւն : Բայտէս երկրիս զանա-
զան կողմերը, Սողոստանու ու իրա-
թարստանու ընդարձակ անապատ-
ները ու աղային երկիրները ցամաքած
ծովու յատակ կը կարծուին . և հա-
րաւային Բմերիկոյ արևմտեան կողմե-
րը երթալով Սվկիանոսին երեսէն կը
բարձրանան, մինչդեռ Սվկիանոսը ու-
րիշ կողմեր ընդարձակ երկիրներ կ'ը-
լու հետ է :

Չրոց այսպէս մեծամեծ զանգուած-
ներով մէկ կիսագնտէն մէկալը անհա-
ւասար փոխադրուիլ՝ երկրիս առանցքին
անհաւասարակչուութեանը պատճառ
կը կարծուի, ուսկից առաջ եկան կլի-
մայից ու բարեխառնութեանց փոփո-
խութիւնը : Ա՛նք հիմայ առանց այս
ինդիքներուս մէջ մտնելու, դնենք հոս
երկրիս զանազան մասանցը հիմակուան
դիրքն ու համեմատութիւնը :

Ինչպէս որ ամենուն յայտնի է, հա-

սարակած ըսուած շրջանակը երկիրս
երկու հաւասար կիսագունդ կը բաժնէ,
մէկը հիւսիսային՝ որուն վրայ է Աւրո-
պա, մէկայն ալ հարաւային : Իսկ հո-
ղազնտոյս այս երկու մասանցը մէջ ե-
ղած ցամաք կտորներուն բաժանմունքը
իրարու շատ անհաւասար են . վասն զի
մեր հիւսիսային կիսագնտին վրայ եր-
կու անգամ ու կէս աւելի ցամաք կայ
քան թէ հարաւային կիսագնտին վրայ .
և սեպելով թէ երկրիս ցամաք մակե-
րևոյթը 1000 է, մեր կիսագունտը
715 կ'ըլլայ ու հարաւայինը 285 :

Աւրիշ դիտելու բան մըն ալ երկրիս
այլ և այլ գօտիներուն տակ եղած ցա-
մաքի բաժանմունքն է : Բնթերցողք
հարկաւ գիտեն թէ այրեցեալ գօտի
կ'ըսուի երկրիս այն մասը որ արևա-
դարձներուն մէջ կ'իյնան, որոնք հա-
սարակածին զուգահեռական շրջանակ-
ներ են, և անկէց քսանուիրեք ու կէս
աստիճանի չափ կը հեռանան, մէկը
դէպ'ի հիւսիս, մէկայն ալ դէպ'ի հա-
րաւ : Բևեռային շրջանակ կ'ըսուին ու-
րիշ երկու արևադարձներուն զուգա-
հեռական եղած բաժանմունքները, և
իւրաքանչիւրը մօտի բևեռէն քսանուի-
րեքուկէս աստիճան հեռու են : Բա-
րեխառն ըսուած գօտիները արևադար-
ձի ու բևեռային շրջանակներուն մէջ
եղած մասերն են : Իսկ սառուցեալ ը-
սուած գօտիները ինչուան բևեռները
եղած միջոյններն են :

Հիմայ իմանալու համար թէ երկու
կիսագնտից այս զանազան գօտիներուն
տակ որչափ ցամաք երկիր կայ, ենթա-
դրենք թէ իւրաքանչիւր կիսագունդ
1000 հաւասար մասն բաժնուած է,
որոնց մէկմէկու հետ ունեցած համե-
մատութիւնը հետևեալ կերպով է .

	Լսրեցեալ Գօրի	Բարեխառն գօրի		Ստացեալ Գօրի
		Հիւսիսային	Հարաւային	
Լիբրիկէ	770	150	60	„
Լսիա	125	750	„	125
Լարոպա	„	950	„	50
Լմերիկա հար . . .	150	800	„	50
Լստրալիա	800	„	200	„
	400	„	600	„
Համագումրք .	2245	2650	860	225
Իսկ ասոնց երկրիս բովանդակ ցամաք մակերևութին հետ ունեցած հա մեմատութիւն է , որ 1000 են թա ղրեցինք :	374	445	143	38

Օ անազան գօտիներուն ալ մակերևոյթը , երկրիս մակերևութի հետ հետեւեալ համեմատութիւնը կ'ունենայ թէ որ երկրիս մակերևոյթը 1000 սեպենք .

Լսրեցեալ գօտի մասն . .	374
Բարեխառն գօտիք մէկտեղ	588
Ստացեալ գօտիք մէկտեղ	38

Բովանդակ 1000

Լսյս համեմատութենէս կ'իմացուի որ երկրիս ցամաք կտորները բարեխառն գօտիներու տակ շատ աւելի ընդարձակ են . և մարդս այս գօտիներուս տակ աւելի կ'աճի ու կրնայ առաջ դալ քան թէ մէկալներուն տակ :

Թէ որ երկրիս ամէն ցամաք կտորներն ալ Վաղղիոյ պէս բազմամարդ ըլլային , որ հիմայ մէկ քառակուսի հարաւմեթր միջոցի մէջ 67 բնակիչ ունի , մարդկանց թիւը դեռ կրնար ինչուան 33 հազար միլիոն աճիլ . ուր ընդհակառակն հիմայ երկրիս վրայի բնակչաց թիւը հազիւ 1000 միլիոն կը հանեն :

Իսկ ծովուն ու ցամաքին մէկմէկու հետ ունեցած համեմատութիւնը հետեւեալն է

	Հազարմէր գտն .	Համեմատական Տասուկ
Ովկիանոս .	93,000,000	730
Ցամաք . . .	34,000,000	270
Բովանդակ .	127,000,000	1000

Իսկ Ովկիանիան ու Պոլինէզիան ալ մէկտեղ առած 100 մասն սեպելով , աշխարհքիս մէկալ կողմերուն հետ հետեւեալ համեմատութիւնը կ'ունենայ :

Ովկիանիան .	100
Լարոպա . . .	105
Լսիա	551
Լիբրիկէ . . .	340
Լմերիկա . . .	419